թելերը եւ կտորները՝ ներկելու համար: Նա ինքը չունի սեփական թելեր կամ կտորներ: Իւր աշխատութեան համար ներկարարը վարձ է ստանում, նայելով թելի կշռին, եւ կտորի լայնութեան եւ երկարութեան»(25): Դարձեալ շատ անգամ, «մինչեւ իսկ առաջ գնացած գիւղերում ընտանիքը ձեռք չէ վերցնում բրդեղէն, բամբակեղէն եւ սրանց նման առարկաներ արտադրելուց: Միայն թէ յիշեալ գիւղերում աշխատութեան մի մասը յանձնւում է վարպետներին, օրինակ՝ ներկելը: Ներկարարը գալիս է ընտանիքի մօտ, բերելով քաղաքում գնած կամ սեփական պատրաստած ներկը: Նա գործում է պատուէր տուողի բակում կամ խրճիթում եւ պայմանաւորուած վարձը ստանում»(26): Ուրեմն տեղէ տեղ շրջող մանրավաճառներու նման կային նաեւ ներկարարներ: Դարձեալ գիւղացին շատ անգամ ինքն իսկ իր ներկարարն էր: «Ներկելու գործն էլ կատարում է ինքը — դեղջկուհին, առանց մասնաւոր գործիքի»(27): Օրինակ, Շատախի մէջ ուր «Բուրդը եւ կեաժը ներկում են թէ՛ տղամարդիկ եւ թէ կանայք գլուզ կոչուած կարասի մէջ, որ 1/2 մետր խորութիւն եւ մօտ 20 սանտիմետր տրամագիծ է ունենում եւ թաղւում է թոնիրի կողքին այնպէս որ վերջինին տաքութիւնը թափանցի սրան: Ամանք՝ չեն թաղում այս կարասը, այլ ներկելիս դնում են մարմանդ թոնիրի վրայ: Ամանք էլ այս կարասի փոխարէն գործ են ածում պղնձէ կաթսայ»(28):

Տեղեկութիւն ունինք նաեւ Ղարաբաղի մէջ գորգի բուրդ ներկելու մասին: «Թելը ներկելու համար նախ վեստերի ծայրերը բաց են անում ծալապատիկ նստած աջ ու ձախ ծնկների վրայ, այդ բացածը աւում է վեզիր»:

«Թելը ներկելուց առաջ մաքուր կրաջուր են պատրաստում, վեզիրները մէջը թրջում, որ պրկանան եւ թէ լաւ գոյն առնեն: Ներկը պատրաստում են տեղական ծաղիկներից եւ բոյսերից եւ թէ չուկայում գնած այս ու այն պատրաստի նիւթից: Ներկը որոշ քանակութեամբ ջրի հետ խառն մեծ կաթսաների մէջ եփ են տալիս, վեզիրները մէջը ձգելով, մի քանի բոպէ պահելով հանում եւ կախելով փայտերի կամ պարանի վրայ չորացնում»:

«Զորանալուց յետոյ վեզիրների թելի մի ծայրը բանալով սկսում են կծկել, գնդակներ շինել: Այդ կծիկները գործադրելուց առաջ, եթէ ուզում են միահաւասար հաստութեամբ թել ունենալ աւելորդ մազերը չմնան կպած, բրթեչով (քերթիչ) քրթում են, այն է թելը ոտի երկու մատների միջից անցնելով եւ ձախ ձեռքի երկու մատներով բռնելով, իսկ աջ ձեռքում բռնած պողպատէ ճաղը այդ թելի կոլոր

(25) Հայ ժողովուրդի արհեստագործութիւնը: — Ս. Թառայեան: Ազգ. Հանդ. 1898, էջ 48:
(26) Անդ, էջ 41:
(27) Անդ, էջ 24:
(28) Անդ, 1913, էջ 194, թիւ 2: